ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 16 -Ա
« 24 » ՀՈՒՆՎԱՐԻ 2025Թ.

ՄԱՆՈՒՇԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ «ՋԵՐՄՈՒԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ն որոշմամբ հաստատված կարգի 85-րդ կետով, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.12 կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 1 գրությունը, Մանուշակ Նալբանդյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2025 թվականի հունվարի 27-ից Մանուշակ Միշայի Նալբանդյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. 2025 թվականի հունվարի 27-ից Մանուշակ Միշայի Նալբանդյանին ազատել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Մանուշակ Միշայի Նալբանդյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

2025-01-24 17:26:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր